

**ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**


**ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

**ԹԱՄԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ**

Հանքարդյունաբերությունը, լինելով ՀՀ արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկը, էական դեր է խաղում ինչպես ոլորտի, այնպես էլ ողջ տնտեսության զարգացման գործում՝ կազմելով 2010 թ. ՀՆԱ շուրջ 4.7%-ը: Արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի՝ ներքին ռեսուրսներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է, այդ իսկ պատճառով այժմ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին (շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի մշակման որակի բարձրացման և սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա), ինչը թույլ կտա ապահովել առկա ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձր աստիճան, հետևաբար՝ լրացուցիչ եկամուտներ:

Հատկանշական է, որ 2010 թ. արդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալի 9.7% աճը (համադրելի գներով) հիմնականում պայմանավորված է եղել հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալի 24%-ը (համադրելի գներով) գերազանցող աճով<sup>1</sup>:

**Գծապատկեր 1<sup>2</sup>**



<sup>1</sup> Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, 2008 և 2009 թթ.:

<sup>2</sup> www.armstat.am

Ինչպես երևում է գծապատկերից, վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ-ում հանքարդյունաբերական արտադրանքի ծավալներն ավելի առաջանցիկ աճ են ունեցել, քան արդյունաբերությունն ամբողջությամբ վերցված և ՀՆԱ-ն:

Հանքարդյունաբերությունն այն յուրահատուկ ոլորտներից է, որտեղ յուրաքանչյուր մասնակցի ի հայտ գալը կարող է էական դեր խաղալ՝ ապահովելով հարյուրավոր աշխատատեղեր, հարկային լրացուցիչ եկամուտներ և ուղղակի ու անուղղակի խթան հանդիսանալով երկրի տնտեսական աճի համար:

Հենց այս նկատառումներով է, որ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է պետական մակարդակով, ինչն առավել ակնհայտ դարձավ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում հանքարդյունաբերության ոլորտին ցուցաբերած պետական մեծ աջակցությամբ. ՀՀ Կառավարությունը 2009 թ. մոտ 40 մլն դոլարի վարկ տրամադրեց այս ոլորտի 4 խոշոր ընկերությունների, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս հաղթահարելու ժամանակաշրջանի խնդիրները և շարունակելու արտադրությունը՝ ապահովելով կայուն աճ:

Ոլորտի կայունացմանը նպաստեց նաև հանքարդյունաբերական արտադրանքի 2010 թ. բորսայական գների աճը: Առհասարակ ոլորտում գների ձևավորումն ունի իր առանձնահատկությունները. նախ՝ վաճառքի առարկայի հումքը սահմանափակ բնական ռեսուրսներն են, որոնց գները կամայականորեն չեն ձևավորվում, այլ բորսայում ենթարկվում են որոշակի կանոնակարգման:

Հատկանշական է, որ տարբեր վերլուծական կենտրոնների գնահատականների համաձայն, 2010 թ. ընթացքում համաշխարհային շուկայում միայն պղնձի պահանջարկը ավելի քան 3 անգամ բարձր է եղել, քան 2009 թ.: 2011 թ. պղնձի շուկայում առաջարկի և պահանջարկի միջև ձևավորված պակասուրդը, ըստ որոշ աղբյուրների, կրկնապատկվելու է՝ կազմելով 900 000 տոննա:

Համաշխարհային շուկայում պղնձի գինն արդեն անցել է ռեկորդային սահմանագիծը՝ 10 հազ. դոլար մեկ տոննայի դիմաց: Ընդհանուր է, վերջին շրջանում այն որոշակիորեն կայունացել է, սակայն, ըստ հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ընկերությունների, դա դեռ սահմանը չէ, քանի որ շուկայում գունավոր մետաղների նկատմամբ չբավարարված շատ մեծ պահանջարկ կա:

Այլ հավասար պայմաններում նման պակասուրդի առկայությունը և աճը թույլ են տալիս կանխատեսել երկար ժամանակահատվածում պղնձի գների աճ, հետևաբար՝ ոլորտի կայուն զարգացում:

Հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունը մեծ է նաև պետությունների եկամտային մասի լրացման առումով: Խոշոր հարկատուների ցանկում առանձնանում են հատկապես այս ոլորտի ընկերությունները. որպես օրինակ կարելի է նշել «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որը 2010 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է 5-րդ տեղը՝ 12.6 մլրդ-ի չափով վճարված հարկերով, իսկ մինչճգնաժամային տարիներին երկրի ամենախոշոր հարկատու ընկերությունն էր:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչը արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Արտահանման մեջ մեծ տեղ է գրավում թանկարժեք մետաղների և քարերի արտահանումը, ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքը, որպես կանոն, արտահանվում է մշակման ցածր մակարդակով, հետևաբար՝ ցածրորակ է ու միջազգային շուկայում սպառվում է ցածր գնով: Այլ կերպ ասած՝

արտահանման մեծ գումարային ծավալներն ապահովվում են քանակական և ոչ թե որակական ցուցանիշների բարելավման հիման վրա:

Աղյուսակ 1<sup>3</sup>

*ՀՀ արտաքին առևտուրն ըստ ապրանքային խմբերի՝ 2005-2008 թթ.*

	Արտահանում (մլն ԱՄՆ դոլար)				Ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)				Ընդ. սալդո
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008	
Ընդամենը, որից՝	974	985	1152	1057	1802	2192	3268	4426	<b>7520</b>
հանքահումքային մթերք	93	137	174	173	297	366	516	665	<b>1267</b>
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	5	9	21	14	34	49	74	115	<b>223</b>
թանկարժեք քարեր և մետաղներ	336	301	209	173	348	313	297	305	<b>244</b>
ոչ թանկարժեք մետաղներ և իրեր	322	281	390	347	94	164	341	419	<b>322</b>

Ինչպես նշվեց, ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի արտահանման ծավալներն էապես աճել են. միայն 2010 թ., նախորդ տարվա համեմատությամբ, այդ ցուցանիշն աճել է 89.9%-ով՝ կազմելով շուրջ 276,5 մլն դոլար:

ՀՀ տնտեսության համար արտաքին և ներքին առևտրի սալդոն տարիներ շարունակ մնում է բացասական ոչ միայն ամբողջ երկրի տնտեսության մակարդակով, այլև, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտում: Այսպես՝ հանքարդյունաբերական արտադրանքի ներմուծման ծավալը, բացարձակ ցուցանիշներով, արտահանման ծավալը 2010 թ. գերազանցել է մոտ 2,5 անգամ՝ կազմելով շուրջ 402.7 մլն դոլար: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքի արտահանումը, ներկրման համեմատությամբ, ունեցել է առաջանցիկ աճ (25.6%):

Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող արտաքին առևտրի սալդոն թույլ է տալիս եզրակացնել նաև, որ արտահանվող որոշ ապրանքային խմբեր ոչ թե արտահանման, այլ ներքին շուկայում սպառման և որպես սպառողական արտադրանք ձևավորվելու խնդիր ունեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է երկրի ներսում զարգացնել սեփական հումքի օգտագործման հնարավորությունները:

Հանքարդյունաբերության հնարավորությունները, բացի տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունից, հազեցվածությունից և որակից, նախևառաջ կախված են

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2009 թ.:

երկրի հանքահումքային ռեսուրսների առկայությունից, այլ կերպ ասած՝ երկրի ընդերքում առկա հումքից և դրա քանակից: Ուստի, ոլորտի զարգացման հեռանկարները դիտարկելիս, նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել առկա հանքերի օգտագործման աստիճանը, ընդերքօգտագործման ներկա վիճակը, զարգացման հնարավոր ուղիները:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների՝ ՀՀ ընդերքի հետազոտության արդյունքում հայտնաբերվել է օգտակար հանածոների ավելի քան 480 հանքավայր:

Երկրի տարածքում հայտնաբերվել է մետաղների ավելի քան 38 տեսակ, սակայն պաշարների պետական հաշվեկշռում հաշվառվել, հետազոտվել և նախնական գնահատման են ենթարկվել միայն 18 տեսակ մետաղների պաշարներ:

Նույն աղբյուրի համաձայն՝ երկաթի հանքաքարի արդյունաբերական պաշարները հաշվվում են մոտ մի քանի հարյուր միլիոն տոննա, պղինձի, կապարի և ցինկի պաշարները՝ մի քանի միլիոն տոննա, մոլիբդենինը՝ մի քանի հարյուր հազար տոննա, ոսկունն ու արծաթինը միասին՝ մի քանի հազար տոննա: Երկաթի հանքավայրերում հանքաքարում երկաթի միջին պարունակությունը կազմում է 30%, պղինձինը պղինձ-պիրիտային հանքավայրերում՝ 3,5%, իսկ պղինձ-մոլիբդենային և ոսկի-բազմամետաղային համալիր հանքավայրերում՝ 0,3%: Կապարի և ցինկի միջին պարունակությունը բազմամետաղային հանքավայրերում, համապատասխանաբար, կազմում է 1,1% և 2,8%: Ոսկու միջին պարունակությունը ոսկու հանքավայրերում կազմում է 7 գ/տ, իսկ արծաթինը՝ 13,5 գ/տ<sup>4</sup>:

Մետաղական հանքավայրերում կան նաև հազվադեպ հանածոների՝ ռենիումի, կադմիումի, բիսմութի, գալիումի, թալիումի, գերմանիումի, ինդիումի, սելենիումի, թելուրիումի և ծծմբի զգալի պաշարներ:

Հատկանշական է, որ ՀՀ հետախուզված հանքավայրերի մեծ մասի երկրաբանատնտեսական գնահատումը և հաշվառումը իրականացվել են ավելի քան 15 տարի առաջ՝ խորհրդային տնտեսական համակարգի պայմաններում:

Այդ իսկ պատճառով այժմ հանքավայրերի վերադիտարկման և վերագնահատման անհրաժեշտություն կա: Նշված հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ վերազինման և հետազոտություններ սկսելու ու վերսկսելու նպատակով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առանձնացվել և դասակարգվել են հանքավայրերի հետևյալ խմբերը (տե՛ս աղյուսակ 2):

Ինչպես տեսնում ենք, հատկապես մետաղական հանքավայրերի դեպքում առկա է ներդրումների ընդգծված անհրաժեշտություն, միայն շատ քիչ մասն է գտնվում արդյունավետ օգտագործման օպտիմալ մակարդակի վրա, մնացած դեպքերում առկա է տնտեսական, տեխնիկական և ֆինանսական ներդրումների, պետական լրահատկացումների կարիք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շահագործման ծախսերը մի քանի անգամ փոքր են, քան շահագործումից ստացված մասնավոր եկամուտները և տնտեսական արդյունքը, վերոնշյալ ներդրումներն ու պետական լրահատկացումն ավելի քան արդարացված կարելի է համարել:

<sup>4</sup> Տե՛ս [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

*ՀՀ-ում առկա հանքավայրերի դասակարգումն ըստ շահագործման վիճակի*

Հանքավայրի տեսակը	Քանակ			Տոկոսներով			
	Ընդ.	Մետաղ- հանքավ.	Ոչ մետաղ- հանքավ.	Ընդ.	Մետաղ- հանքավ.	Ոչ մետաղ- հանքավ.	
Արդյունաբ. նշանակույթ. կամ բավականաչափ արդյունաբեր. պաշարներով	84	3	79	29,8	33,3	29,6	Շահագործումը տնտեսապես ցանկալի է. մրցունակ է
Սահմանափակ արդյունաբ. պաշարներով	143	5	138	50,7	33,3	51,7	Շահագործումը հնարավոր է հավելյալ ներդրումների դեպքում և լրահատ-կացումների պայ-մաններում
Շահութաբերու թ. սահմանի մոտ	55	5	50	19,5	33,4	18,7	Շահագործումը հնարավոր է տնտեսական, տեխնիկական և ֆինանսական ներդրումների ապահովման դեպքում

Հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում հայտնաբերվել են գունավոր, ազնիվ, ռադիոակտիվ և սև մետաղների մոտ 300 երևակումներ: Դրանցից շատերը համարվում են հեռանկարային: Ներկայումս առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հանքաքարի բարձր որակով և տնտեսաաշխարհագրական, ինչպես նաև լեռնաերկրաբանական բարենպաստ պայմաններով աչքի ընկնող փոքր հանքավայրերը: Շուրջ 150 այդպիսի հանքավայրերի առկայություն է ենթադրվում սև և գունավոր մետաղների բազմաթիվ երևակումներում:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ընդերքի շահագործման լիցենզիա (տրամադրվում է 5 տարի ժամկետով, որը հնարավոր է երկարացնել մինչև 4 տարով), հանքարդյունաբերության և հետագա շահագործման լիցենզիայի ստացման երաշխավորված իրավունք, լեռնահանքային արդյունաբերության համար արտոնագիր մինչև 25 տարի ժամկետով, մինչև 50 տարի տարածելու հնարավորությամբ, պարզեցված ընթացակարգեր կարճաժամկետ

<sup>5</sup> Տե՛ս [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

հետազոտությունների համար (մինչև 3 տարի) և հանքարդյունաբերության լիցենզիաներ (մինչև 12 տարի), Կառավարության կողմից փաստացի թույլտվություն ստանալու դեպքում շահագործման և հանքարդյունաբերության լիցենզիաների փոխանակման հնարավորություն:

Լիցենզիայի վճարը տարեկան կազմում է մոտ 30 000 ԱՄՆ դոլար, իսկ շահագործման թույլտվության վճարը, յուրաքանչյուր հեկտարի հաշվով՝ տարեկան մոտ 17 ԱՄՆ դոլար և 170 ԱՄՆ դոլար՝ հանքարդյունաբերության լիցենզիայի համար<sup>6</sup>:

Նկատի ունենալով հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունն ու կարևորությունը, ինչպես նաև եկամտաբերության մակարդակը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում սահմանված են բավականին ցածր հարկային և լիցենզիոն վճարներ: Համաշխարհային բանկի մասնագետների կարծիքով՝ ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտի հարկային դաշտը բավական մեղմ է: Նրանք համարում են, որ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտից ստացվող պետական եկամուտները համարժեք չեն ոլորտի եկամուտներին, հատկապես մետաղների միջազգային գների բարձրացման պայմաններում: Համաշխարհային բանկի մասնագետները նշում են, որ փոփոխությունները պետք է վերաբերեն հատկապես բնապահպանական վճարներին՝ ըստ միջազգային գների փոփոխության (ընդ որում՝ և՛ աճման, և՛ նվազման դեպքերում): Սակայն միաժամանակ հարկ է ընդգծել, որ մետաղների գները բորսայում շատ արագ փոփոխության են ենթարկվում, իսկ ամսական և տարեկան վճարների սահմանումը նման մեթոդաբանությամբ էականորեն կոժվարանա և՛ հարկ վճարողների, և՛ հարկային մարմինների համար, քանի որ հաճախ փոփոխվող գների դեպքում որոշակի օրվա և ժամի դրությամբ գնի սահմանումը կամ ամսվա համար միջին գնի կիրառումը հնարավորություն չի տա ընկերության եկամուտներին համարժեք հաշվարկել համապատասխան հարկեր, քանի որ վերջինս իր արտադրանքը կարող է վաճառել տարբեր ժամանակահատվածներում՝ գների ձևավորման առավել շահեկան և, ընդհակառակը, ամենաանբարենպաստ պահերին: Նման պարագայում հարկային չափորոշիչների որոշումը և կիրառելիությունը դառնում է խնդրահարույց: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մշակել հարկային այնպիսի մեխանիզմ, որը տեղիք չտա անճշտությունների և չունենա բացասական ազդեցություն ոլորտի զարգացման առումով:

Մատնանշելով հատկապես հանքարդյունաբերության ոլորտում օտարերկրյա ներդրումների ոչ բավարար ծավալի փաստը՝ ՀՀ հանքարդյունաբերողներից շատերը կարծում են, որ երկրում գործող հարկային սահմանաչափերը ցածր անվանել չի կարելի: Սակայն ներդրումների ծավալի պակասը ավելի շուտ բացատրվում է պաշտոնապես և ոչ պաշտոնապես ոլորտ մուտքի արգելքներով և ներդրումների ծավալների

մեծությամբ, քան հարկային մեխանիզմներով:

Պետք է նշել, որ հանքարդյունաբերությունը Հայաստանում տնտեսավարման միակ ոլորտն է, որտեղ, ըստ էության, գործում է շահութահարկի պրոգրեսիվ դրույքաչափ. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ շահութաբերության նորման 25%-ը գերազանցելու դեպքում հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերությունները պարտավոր են վճարել տվյալ ժամանակահատվածում իրացված օգտակար հանածոյի համախառն հաշվարկային արժեքի 0.1%-ի չափով ռոյալթի՝ շահույթի 25%-ը գերազանցող յուրաքանչյուր 0.8%-ի համար: Տվյալ պարագայում գործարարներն ընդգծում են այն հանգամանքը, որ շահույթի աճին ոչ համամասնորեն մեծանում է հարկային բեռը, իսկ հակառակ դեպքում վնասների փոխհատուցում չի իրականացվում՝ հարկային բեռը մեղմելու միջոցով: Ըստ

<sup>6</sup> St'u Armenian Mining Sector: Brief Overview, ACP CJSC, 2008:

հանքարդյունահանող գործարարների՝ հարկային մեխանիզմի առկա մեթոդաբանությամբ արդեն իսկ անուղղակի կապ է ապահովվում արդյունահանվող օգտակար հանածոների և մետաղների միջազգային գների միջև:

Սակայն հարկային պրոգրեսիվ մեխանիզմը կիրառվում է ոլորտի առանձնահատկություններից ելնելով, իսկ մնացած դեպքերում գործում է մնացած բոլոր ոլորտների համար սահմանված սկզբունքներով, քանի որ, այսպես թե այնպես, հարկումն իրականացվում է շահույթի նկատմամբ՝ դրա բացակայության դեպքում նախատեսելով 0 դրամ վճար և շահութահարկի գծով կանխավճարների հետվերադարձում:

Հավելենք նաև, որ գործարարների կողմից, ռեգրեսիվ հարկով պայմանավորված, ոլորտի գործունեության վնասների և հարկային բեռի կապի ապահովման բացատրությունը զուտ տնտեսական է և կիրառելի է միայն վերացարկման սկզբունքների պահպանման դեպքում: Այլ պարագայում նման հարկային մեխանիզմով պետք է վճարված հարկային վճարները (փոխհատուցումները) և երկրի ու բնակչության կրած վնասները դժվար է համարժեք համարել:

Այս կապակցությամբ նշենք, որ բնապահպանության բնագավառի մասնագետներն արձանագրում են, որ վերջին տարիներին ընդերքի անխնա օգտագործումը հանգեցրել է հողի աղտոտման, ինչն անցնում է նաև սննդային շղթա:

ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնագետները, ներկայացնելով «ՀՀ գյուղատնտեսության ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները, նշել են, որ հանրապետության տարբեր շրջաններում հողագրունտի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հանքարդյունահանման հետևանքներն այսօր արդեն անթույլատրելի են և անվերահսկելի:

Այս խնդրի շրջանակներում նպատակային է նաև դիտարկել երկրի ներդրումային քաղաքականությունը: Հայաստանը հանդես է գալիս ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականությամբ, ինչը հաստատված է ինչպես երկրի ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներով, այնպես էլ արտահայտված է օրենսդրական աջակցությամբ: Հետևաբար՝ հարկային բեռի փոփոխությունը ոլորտում անհրաժեշտ է իրականացնել ներդրումային քաղաքականության հետ հակասություն չառաջացնելու սկզբունքի հիման վրա:

Այնուամենայնիվ, հանքարդյունաբերության ոլորտի հարկային բեռի վերադիտարկում անհրաժեշտ է, և դա պետք է իրականացնել ինչպես ոլորտի շահութաբերության բարձր մակարդակին համարժեք հարկային մուտքերի ապահովման սկզբունքի, այնպես էլ երկրում ընդերքապահովվածության հիմնախնդրի և ոլորտի զարգացմանն արգելակման բացառման համատեքստում:

Կարևոր խնդիր է նաև ընդերքի օգտագործման գործուն իրավական կարգավորման և վերահսկման մեխանիզմների ստեղծումը: «Ընդերքի մասին» նոր օրինագիծը մշակվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից, Համաշխարհային բանկի ֆինանսական ու տեխնիկական աջակցությամբ, ներկայումս քննարկվում է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում: Սակայն բնապահպանները և «Կանաչների միությունը» արտահայտում են մի շարք մտահոգություններ նոր օրինագծի գործունակության վերաբերյալ: Այսպես՝

- Բնապահպաններին անհանգստացնում է այն հանգամանքը, որ նոր օրինագիծը թույլ է տալիս հանքարդյունաբերության ոլորտի գործարարներին թափոնները և ոչ

արդյունագործական նշանակության ապարները հարկային դաշտ չհանել: Նոր օրինագծում քողարկված է թափոնների սահմանումը: Ճշգրիտ սահմանումների փոխարեն, ինչպես օրինակ՝ պոչամբարներ, մակաշերտի ապարներ, ոչ արդյունագործական նշանակության հանքանյութեր և այլն, օրինագծում կիրառվում է «հանքանյութի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած ապարների կուտակումներ» ձևակերպումը: Եթե օգտագործվեր առաջին սահմանումը, ապա ընկերությունները թափոնների դեպքում կվճարեին՝ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի: Իսկ ապարների կուտակման համար ընկերությունները չեն վճարում, քանի որ ոչ մի օրենքում նման պարտավորություն չկա: Մինևս ժամանակ, անլուծելի է մնում «ապարների կուտակման» հետևանքով բնակչության առողջության և էկոլոգիական վիճակի վատթարացման փոխհատուցման խնդիրը:

• Օրինագծի 25-րդ հոդվածում թվարկվում է, թե որտեղ չի կարելի ընդերքօգտագործմամբ զբաղվել, և այդ ցուցակում անտառը չի նշվում, թեև, ինչպես հայտնի է, հանքարդյունաբերության մեծ մասը կապված է հենց անտառային տարածքների հետ: Այլ կերպ ասած՝ հնարավորություն է ստեղծվում «քողարկելու» *անտառներն* այլ կատեգորիայի տակ, ինչը նույնպես լի է էկոլոգիական հետևանքներով<sup>7</sup>:

Հաշվի առնելով արտահանվող արտադրանքի որակական զարգացման նպատակով ներդրումների ներգրավման կարևորությունը՝ պետք է փաստել, որ այս ոլորտում ՀՀ-ում առկա են մի շարք առավելություններ՝ հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրողների համար՝

1. Կառավարության հանձնառություն՝ ուղղված ՕՈՒՆ-ի ներգրավմանը.
2. Ինտելեկտուալ ներուժի առկայություն.
3. Էժան աշխատուժի առկայություն, որն իր հերթին ապահովում է արտադրանքի ինքնարժեքի իջեցում, հետևաբար նաև մրցունակության մակարդակի բարձրացում միջազգային շուկաներում.
4. Ներդրումները կարգավորող գրավիչ օրենսդրություն. Ամերիկյան փաստաբանների ասոցիացիայի գնահատմամբ՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը օտարերկրյա ներդրումների մասին ամենաառաջատար և ազատական օրենքն է, որ գոյություն ունի անցումային շրջանում գտնվող տնտեսություններում.
5. ՀՀ-ն հայտարարել է «Բաց դռների» ներդրումային քաղաքականություն, և այս ազատական մոտեցումը արտացոլվել է օրենսդրության մեջ.
6. Օտարերկրացիների կողմից 100%-ով սեփականության տիրապետման թույլտվություն.
7. Դրամական փոխանցումների սահմանափակումների բացակայություն.
8. Էներգակիրների մրցունակ արժեք.
9. ՀՀ-ն ունի ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ, որը ներառում է ներմուծման ժամանակ կիրառվող պարզեցված երկտարիֆային համակարգ (0 և 10%), չհարկվող արտահանում, և չկան առևտրի քանակական սահմանափակումներ.
10. Չկան սահմանափակումներ ներմուծվող կանխիկ արժույթի վերաբերմամբ.
11. Արտահանման տուրքերի բացակայություն և արտահանված ապրանքների ու ծառայությունների համար ԱԱՀ հետվերադարձ.
12. Արտարժույթի ազատ փոխանակում.
13. ««Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» 2010 թ. մայիսի 20-ին ընդունված օրենքով նախատեսվում է, որ սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար հարկ վճարողին վճարվում է տույժ: ՀՀ Կառավարության՝ այս տարվա փետրվարի 10-ի թիվ 85-Ն որոշմամբ տույժերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով տվյալ ժամանակահատվածի համար ՀՀ ԿԲ

<sup>7</sup> Տե՛ս [www.ecolor.org](http://www.ecolor.org)



պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը:

Մասնավորապես հանքարդյունաբերական ոլորտին առնչվող ներդրումային բարենպաստ պայմաններից կարելի է համարել հետևյալ առավելությունները.

- համեմատաբար հեշտացված լիցենզիոն գործընթաց,
- հանքերի շահագործման և բնապահպանական համեմատաբար ցածր դրույքաչափեր,
- լրացուցիչ տուրքերի բացակայություն:

Չնայած ներկայացված առավելություններին՝ հանքարդյունաբերական ոլորտում օտարերկրյա ներդրումների 2009 թ. տեսակարար կշիռն ընդհանուր ներդրումների ծավալում կազմել է ընդամենը 2,85%:

Աղյուսակ 3<sup>8</sup>

*Օտարերկրյա ուղղակի ներդրումների ոլորտները /2009 թ./*

Ոլորտ	(հազար ԱՄՆ դոլար)	Տեսակարար կշիռ (%)
Հաղորդակցություն	253,402.5	34.60
Էներգամատակարարում	151,320.8	20.60
Հանքարդյունաբերություն	20,901.4	2.85
Գյուղատնտեսություն, որսորդություն	6,700.0	0.91
Քիմիական արդյունաբերություն	4,574.7	0.62
Օդային տրանսպորտ	31,184.3	4.20
Մանրարդյունաբերություն	29,435.7	4.02
Անշարժ գույքի գործունեություն	34,628.0	4.72
Հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	5,033.7	0.68
Հետազոտություն	4,470.1	0.61
Մեծածախ առևտուր	4,517.0	0.61
Հաշվապահություն	4,575.4	0.62
Ջուր, մաքրում և բաշխում	1,923.2	0.26
Տրանսպորտ	148,800.0	20.32
Այլ	30,651.7	4.10
Ընդամենը	732,118.5	100.00

<sup>8</sup> Տե՛ս [www.ada.am](http://www.ada.am)

Ոլորտում ներդրումների պասիվությունը, բացի ընդհանուր ՀՀ ներդրումային ոլորտին հատուկ ռիսկայնության, կառավարման, ենթակառուցվածքային և այլ թերություններից, պայմանավորված է հետևյալ բացասական գործոններով.

- ոլորտի հագեցվածություն,
- նոր գործունեություն սկսելու հետ կապված մեծ ծախսեր,
- արդյունաբերության ոլորտում՝ միկրոմակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակաս, տեղեկատվական բազայի բացակայություն,
- ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ոչ պատշաճ մակարդակ,
- Հայաստանում հումքային արտադրատեսակների՝ վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայություն,
- արտադրություն-գիտություն-կրթություն կապի սերտ համագործակցության բացակայություն և հետադարձ թույլ կապ,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակություն:

Հարկ է նշել, որ նման պարագայում առավել նպատակահարմար է ոչ թե նոր ընկերություն ստեղծելու միջոցով ներդրումների իրականացումը, այլ գործող ընկերություններում ներդրումների կատարումը: Նման ներդրումները կարող են ուղղվել հատկապես արտադրական և տեխնոլոգիական վերազինմանը, որը կհանգեցնի արտահանվող հանքարդյունաբերական արտադրանքի որակական բարելավմանը, իրական դրամական ծավալի մեծացմանը, երկրում ներքին դրամաշրջանառության աճին՝ իր բոլոր տնտեսական դրական հետևանքներով:

Այսպիսով՝ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման և տնտեսության մեջ վերջինիս ազդեցության մեծացման նպատակով առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

1. *Նորագույն տեխնոլոգիաների ներդրման քաղաքականության մշակում.* իրագործման համար կարևոր նշանակություն կունենա հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացումը, ընդ որում՝ այս ենթատեսքատում առավել մեծ ուշադրության են արժանի ենթակառուցվածքների, ոլորտի թափանցելիության, ընկերություն-պետություն-օտարերկրյա ներդրող համագործակցության ակտիվացումը և այլն, քանի որ հարկային և այլ դրամական արտոնություններն արդեն իրենց ազդեցությունը սպառել են:

2. *Ինտելեկտուալ ներուժի նպատակային օգտագործում, վերապատրաստման միջոցառումների կազմակերպում, գիտելիքահենք տնտեսության ստեղծում:* Այս առումով հատկապես կարևոր է տեխնոպարկերի ստեղծումը, բուհերի և հանքարդյունաբերության ոլորտի գործարարների համագործակցությունը և այլ միջոցառումներ գիտության՝ տվյալ բնագավառում ներգրավվածության ընդլայնման նպատակով:

3. *Հարկային բեռի հստակեցում.* Ելնելով պետության և ընկերությունների շահերից, առաջարկվում է հարկային սանդղակներ սահմանել շահութահարկի գծով՝ ըստ առանձին սահմանաչափերի (այլ կերպ ասած՝ ընկերության կողմից ստացված, գոյություն ունեցող շահույթի նկատմամբ և ոչ թե ստեղծել լրացուցիչ բեռ դեռ չկայացած շահույթի նկատմամբ): Կիրառելի կարող է դառնալ նաև հարկման այն տարբերակը, երբ շահույթի գանձմանը զուգահեռ սահմանվի սանդղակ ընկերության վաճառքի գների և ժամանակահատվածի միջին գների տարբերության նկատմամբ՝ հիմք ընդունելով համապատասխան հաշիվ-ապրանքագրերը:

4. *Ներդրումային և գործարար միջավայրի բարելավում,* որը խիստ կարևոր է ոլորտի համար, սակայն ընդհանրական է և առնչվում է ենթակառուցվածքների, պետական աջակցության մեխանիզմների մշակմանը, մարքեթինգային, տեղեկատվական հասանելիության մշակույթի ձևավորմանը և այլն:

5. *Թափոնների հստակ սահմանում*. բնապահպանական նկատառումներից ելնելով՝ բացառել հարկային խուսափումները:

6. *Օրինագծից բոլոր այն կետերի բացառումը, որոնք առևտրային գաղտնիք չեն պարունակում, սակայն սահմանափակում են տեղեկատվության ելքը*:

Առաջարկված միջոցառումները, լինելով ռեսուրսատար (ինչպես ժամանակի, այնպես էլ ֆինանսական առումներով), այնուամենայնիվ, կարծում ենք, կապահովեն բարձր բազմարկչային էֆեկտ հանքարդյունաբերության ոլորտում, ինչպես նաև ողջ տնտեսության որակական զարգացման համատեքստում՝ լինելով գիտելիքահենք տնտեսության հիմնաքարերից: